



**Jowhannou Imastasiri hajo'c kathoulikosi  
Hostowanouthiun ansarz jousoj marmnanaloj banin  
Khristosi eu .endd~em dauanola.c zmi Khristos jerkous  
bnouthiuns**

**hratarakec Karapet Wardapet**

**Yovhannêš <Ôjnec'i>**

Gässen 3331





9331

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ՀԱՅՈՑ ԿԵԹՈՒՊԴԻԿՈՍԻ

ԽՈԽԾՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՇԱՐԺ ՅՈՒԽՈՅ ՄԱՐՄՆԱՆԱԼՈՅ  
ԲԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՀԵՇՇԵՄ ԴԱհԱՆՈՂԱՅ ԶՄԻ  
ՋՐԻՍՑՈՍ ՅԵՐԱՌՈՒ ԲՆՈՒԻԹԻՆՍ:



Արտատպած

1896 թ. Ապրիլ ամիս Արարատ ամսագրից

Հ Յ Ա Մ Ա Բ Ա Կ Ե Գ

Կ Ա Ր Ա Պ Ե Տ Վ Ա Ր Պ Ա Պ Ե Տ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒՅՑ ՄՐՅՈՑ ԷջՄԻԱՆՆԵԼ

1896

331

ՀՐԱՄԱՆԱՀ

**Տ. Տ. ՄԿՐՏՉԻ**

ՎԵՀԱՓՈԽ ԵՒ ՍՐԲՈԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՑ ՀԱՅՈՑ

## ՅԱՐԱՎԵՐԱՆ

Յովհան Օձնեցու հայրապետութեան տարիներն հաշուում են 718—729 թիւ: Մետասանամեայ այս կարծատեւ շըջանը մի առանձին դարավուխ է կազմիսմ մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ: Գրիգոր Լուսատուքից եւ սուրբ Սահակից յետոյ մինչեւ Ներսէս Շնորհալի՝ մեր հայրապետներից ոչ ոք չէ արել այն եկեղեցւոյ ներքին եւ արտաքին կազմակերպութեան, բարեգարդութեան եւ հոգեւոր յառաջադիմութեան համար, ինչ որ առել է բազմահմիտ մեծ հմաստասէրը: Կաթողիկոս է եղել նա այնպիսի մի ժամանակ, եռք Անապատի որդիները կէս դար շարունակ աւերել, անապատ էին դարձրել չայատան աշխարհը, ազատ լեռների ազատասէր որդիներին ծնշել ընդ միշտ կիսալուանի լուծի ներքոյ: Օճնեցու մնախն պատմած այն գեղեցիկ աւանդութիւնը, թէ ինչպէս ներկա-

յացել է նա Արաքացոց ամիրապետին եւ ցոյց է տուել իւր պերծ զգեստի ներքոյ մարմ-նի վերայ հազած խարազը՝ բնորոշ է պար-զելու համար նորա կրկնակի դերը, արտա-քուատ երկրի տիրապետողների եւ թշնամի-ների, իսկ ներքուատ իւր եկեղեցւոյ, իւր ջլատեալ հօտի նկատմամբ:

Ներկայիս հրատարակած ճառը նորա եկեղեցական հոգեւոր գործունէովմեան, նո-րա իմաստասէր բեղմնաւոր հոգու ամենազե-ղեցիկ յայտարարներից մէկն է: Օճնեցու ա-նոսամբ մեր ծեռքը հասած մի համառու չա-յոց ազգային ժողովների պատմու-թեան եւ ուրիշ պատմական վկայովմիւնների համաձայն՝ նա մի ժողով է գումարել Մանազ-կերտում 726 թուին, ուր ներկայ են եղել նա եւ վեց ասորի յակորիկ եալիսկոպոսներ, եւ այդտեղ բացայսայտ կերպով որոշուել է չայց եկեղեցւոյ դաւանովմիւնը եւ հաստ-տուն կանոններ են սահմանուել մի քանի մեր եկեղեցուն առանձնայտուկ կարգերի եւ տօ-ների համար: Ինչպէս Օճնեցու «Ընդդէմ» Ե-

ըեւովմականաց՝ ճառը ցոյց է տալիս, դասա-  
նովմեան իմնդրում՝ նորա գլխաւոր ջանքն  
եղել է մերժել այն բոլոր օտար կարծիքնե-  
րը, որոնք մի քնութեան դաշտանովմինը  
աղանդաւոր գյոներով ներկայացնելով՝ կաս-  
կածելի էին դարձնում նա եւ չայց ողջամիտ  
վարդապետովմինը եւ քաղկեդոնականների  
կողմից իրաացի յարձակումների տեղիք տա-  
լիս: Ներկայ ճառի մէջ եւս նորա առարկու-  
թինները մասսամք այդ մոլար կարծիքների  
դէմ են ուղղուած, բայց գլխաւոր նպատակն  
է հերքել երկու քնութեանց ուսումը եւ  
ցոյց տալ, թէ ինչպէս պէտք է մի բնութին  
հասկանալ նախնական ուղղափառ մոքով: Այս  
ճառն ուրեմն առանձին կարեւորովմին ունի  
այն տեսակէտից, որ նորա մէջ չայց եկե-  
ղեցւյ դաշտանովմինն այս փափուկ իմնդրում  
քացատրուած ենք գտնում՝ կրկին կողմնորով՝  
հակառակ մի աքն ակութեան եւ հակա-  
ռակ երկաքն ակութեան: Նորա ար-  
ժէքն ամելի է մանաանդ նորա համար, որ  
խօսողն այստեղ իմաստասէրի նման մի մնօ

հայրապետ է՝ և կեղեցական հօր քոլոր  
հեղինակութեամբ, եւ որ նա խօսում է այս-  
պիսի ազատ ոգուվ եւ իւր դիրքին ու իւր ա-  
նուան վայել ոճով, ջերմեռանդ հաստացողի  
բոլոր անկեղծութեամբ եւ ծշմարիտ աստոա-  
ծարանի բոլոր հմտութեամբ՝ առանց վեր-  
ջին դարերին յատուկ հայնոյական դարձուած-  
ների, առանց ծոռումարանովմինների եւ սե-  
թեմթովմինների:

Այս մատի վերջարանից կարելի է եղ-  
ակացնել, որ նա մի օտար համայնքի  
է ուղղուած՝ գուցէ իրեւ դատանութեան  
գիր Մանազկերտի ժողովում ներկայ ե-  
ղող ասորի եպիսկոպոսներին յանձնուած։ Թէ  
որքան ծշմարիտ է գոշի այն նկատողու-  
թինը, թէ այս թուղթը ներսէս Համբոր-  
նացին Լետն Բ.-ի հրամանով իրեւ պատ-  
գամատր Կ. Պոլիս գնացած ժամանակ հետն  
է տարել՝ ստուգել չենք կարող յայտնի է որ  
Համբորնացին իւր Ատենարանութեան մէջ Օծ-  
նեցուն վկայ է քերում իրեւ ուղղափա-  
ռութեան վարդապետի։ եթէ ուրեմն նա այս

Թղթի վարդապետութիւնն եւա իբրեւ մաքուր  
ծշմարտութիւն էր ընդունում՝ մի կարեւոր  
փաստ կլնէր այդ նորա իսկական տեսութիւ-  
նը Միութեան ինդքի նկատմամբ որոշելու  
համար:

Աւելորդ չենք համարում՝ ուշադրու-  
թիւն հրափրել նաեւ այստեղ գտնուած եր-  
կու յիշատակութիւնների վերայ: Ժայռահեղ  
միաբնակներին Մ ծ դ ն է ի ց նմանեցնելը մի  
նոր ապացոյց է մեր այն կարծիքի ստուգու-  
թեան համար, թէ այդ երկու աղանդների մէջ  
պատմական սերտ կապ է եղել. իսկ Ս ի ւ-  
հ ո դ ո ս ժ ո դ ո վ ը յիշելլ՝ որով պապէս կո-  
չուած Ա ռ ա ք ե լ ա կ ա ն ժ ո դ ո վ ի կ ա-  
ն ո ն ն ե ր ն ե ն հասկացուում ցոյց է տալիս,  
որ այդ կանոնները հնուց ի վեր յայտնի էին  
մեր մէջ եւ մեծ յարգ էին վայելում: ինչպէս  
որ նորա չարէշների եկեղեցւոյ մէջ իբրեւ մի  
կ ա ն ո ն ա կ ա ն զրուածք ընդունուած են:

Կ. Վ.





## ՅՈՎՀԵՆՆՈՒԹՄԱՍՏԱՌԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈԼԻԿՈՍԻ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՇԱՐԺ ՅՈՒՍՈՅ  
ՄԱՐՄՆԱՆԱԼՈՅ ԲԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՆԻ,



ԸՆԴԴԵՄ ԴԱՒԱՆՈՂԱՅ ԶՄԻ ՔՐԻՍՏՈՆ  
ՅԵՐԿՈՒՍ ԲՆՈՒԹԻՒՆԸ:

---

« Օ աստուածաբանութիւն աստուածածնեւ-  
լութեան բանին Հօր ոչ ոմանք ստոյգ հա-  
ւատոց այժմ ստորոգեն՝ զայն, որ ի հայրա-  
կան ծոցոյ և ի թափանցիկ լուսոյ և ի գե-  
րազանցեալ փառացն ի թանձրադիտակ մարդ-  
կայինս ընութիւն ի խոնարհ թափեալ և քա-  
ղաքավարեալ յայտնեցաւ՝ պտղաբերել հեթա-  
նոսաց եկեղեցւոյ և ոչ ուղղակի դաւանեն ըստ  
ինքնազիմաբար աւետարանին քարոզիցն, յոր-  
մէ հանդիսի հազորդութիւն մարդկութեա-  
նըս առ Աստուածութիւնն. և ոչ զաստուա-  
ծային շնորհացն բազմապատիկ պարզեռ և  
զմեծ և զփրկական զիսորհուրդն յինքեանս  
նախատպաւորեն՝ ըստ զեղմանն անձրեահոս  
ցողոյ, որ ոռոգեացն զանպաղութիւն մարդ-

կան ի կուապարիշտն երաշտութենէ՝ բողբո-  
ջեալ բուրեն ընդհանրական եկեղեցւոյ. այլ  
քակեալ միանգամայն իսկ զհիմն ուղղափառ  
հաւատոյ, և հայեցեալք յայս մոլորութիւն  
և ի վարդապետութիւնս դիւաց, և հարեալք  
իւրեանց խոնճի մոտօք՝ զթանձր մօրուս յառաջ  
ձգեն, որ յաղաբողոնս պերճացեալ պա-  
ճուճին, և բարձրայօն պարծին ըստ սակի ամ-  
բարտաւանից, և զեղեղումն մոտաց զինչկա-  
մութեան ի գործ արկեալ վրիպումն գլոր-  
ման՝ ճաշակեն ոչ ստորացնելով զթագու-  
ցեալն ի նմա գառնագոյն քան զեղի մախա-  
նացն բոց, յորմէ յզացեալ ծնանի նոցա զա-  
նազան և զտրտմաբեր հերետիկոսութիւնս:

Այսպէս օտարացեղութիւն սոցա ի  
մէջ առեալ և յաւէտ բացընկեցիկ յուղղա-  
փառ աւանդիցն լեալ և զհիւսակս Գո կղիս  
սուրբ ժողովոցն խզել հանդիսացեալ որ ի  
Նիկիայ բիւթանացոց սակս Արիոսի և որ ի  
կոստանդնուպօլիս վասն հոգեմարտին Մա-  
կեդոնի և որ յԱփեսոս յԱսիայ յաղագո  
յիմարութեան Նեստորին և մոտախար ի-  
մացուածիւ ըստ գօղոնի օցտողաց և ի բար-  
ւոյն վրիպեցուցանողաց հակաճառին ընդդէմ  
ճշմարտութեանն ըստ նեստորականացն ի-  
մացմանց, և յետ անճառ միաւորութեան բա-  
նին և մարմնոյն երկուս բնութիւնս բաժա-

նաբար սահմանեն ի մի Տէր Յիսուս Քրիստոս երկու կամ և երկու ներգործութիւնու և ոչ մարդացելոյն Աստուծոյ ի սըրբոյ կուսէն խոստովանին զկիրս, այսինքն ըզիաջ և զմահ որ վասն յաշնարհի, այլ յատուկ մարդոյն միայնոյ և եթէ չարչարեալն և խաչեալն ոչ է Տէր և ոչ Քրկիչ և ոչ Աստուծ և Որդի Աստուծոյ: Այսպէս ի ներքս ի խորոջ անդ զմիտս ամբարշտութեան ցուցեալ՝ յափշտակեն զտկարս, գիտութեամբ ի հրապուրանս բանից արկանելով, և արբոցանեն կղերց եկեղեցւոյ զպղտորութիւն մոլորութեան և զհակառակաբանութիւնս յոշնչ պիտանացու: Եւ զոր խարդախութեամբ թագուցանել համարին, զնոյն յայտնապէս ցուցանեն զմոլար միտս և զհերետիկոս լեզուագարութիւնու զոր ոչ ասել իսկ պարտվարկանի եկեղեցի ուղղափառաց և ոչ լոել վասնզի յաւէտ իմն հեռի և օտար և ի բացեայ է յառաքելական վարդապետութիւնէ:

Սակայն մեք աստանօր ոչ պարտիմք լոռութիւն միայն պատուել զի մի ի հակառակաց մղիցիմք, կամ թէ երկրանութիւն ինչ ի մէջ անկցի կամ մեծաբանութիւն, կամ թէ պատճառս ինչ տրտնջման գտեալ՝ և ևս առաւել զհրաբոր-

բըն թղիսեն չարութիւն և աճեցուսցեն զգը-  
ժոխըմքեր զգայումնն: Այլ ընդդիմասցուք  
նոցա ուղղափառ հաւատոց մարտիւ և սան-  
ձահարեալ հանդիսացուք վիստերախ խար-  
դաւանո հերձուածողութեան, և վերջատան-  
ջել զյոգնահօս և զբազմատարած գիշերա-  
մածն խաւար, զի թերեւս լրութիւն եկեղեց-  
ւոյ Քրիստոսի ըստ սրբոց հարցն աւանդից  
գերապայծառ և անշիջանելի փայլեսցէ, և  
ճշմարիտ հաւատոցն բարեմտութիւն ծաղկա-  
նետեալ բողբոջեսցէ, և բարբարոսական երկ-  
բայութիւն կամ տարահաճելի նսեմական  
ինչ թագուցեալ միտք ի բաց տարեալ տրոհես-  
ցին, և առհասարակ ամենեքեան ի մի առա-  
ւելութիւն պատուայթեակոխեալ ելանիցեմք:  
Արդ, այսուհետեւ ես աստ ոչ զհարուստ բա-  
նից պաճուճանս ինձ ինքն հայցեմ: այլ զաստ-  
ուածաշունչ Գրոց սրբոց աներկբայ հաստա-  
տութիւն և զհարցն հաւատոց գաւանու-  
թիւնս, որ կարող են տապակել զբոլոր ամե-  
բարշտութիւնս և հաստատել զողջախոչ  
հաւատոցն խորհուրդս որ ի Քրիստոս:

Եւ նախ սկսայց ուստի սկսանելն լաւա-  
գոյն է և ասացից որ զմէնջ ամբաստանու-  
թիւնն ստոցն հերէսիոտաց: \* Զի միշտ հան-  
դիսանան ստեղծանել յարել ի մեզ զչարա-

Հագագ մտածմանցն առարկութիւնս, որ ըստորահոսեալն ի յանդունդուսաւարին տարտարոսին և զմահորոնն է զգեցեալ թիւնս, զոր ոչ իսկ ամենեին բնաւին զիտեմք, և անդր է քան զբնաւ ասելի մտածմունս մեր և միայն ինքեանէ իսկ յառաջ բերի՝ թուլակի խորհրդոց յեղափոխումն, զի թերևս զիւրեանցն կարասցեն կացուցանել և արբուցանել զշար ուխիցն ամրոպս: Եւ արդ օն առեալ զարհամարհելիսն նոցա բանս ծիծաղելիս՝ յարկացուցից\* և տապալեցուցից ի զօրութենէ պատրաստ օգնականին մերոյ Քրիստոսի. թերևս և փոխեցից \*\* ձեզ շընորհս ինչ հոգեւորս առ ի հաստատել զձեզ: Ընդէ՞ր ըլնաւ ազատութիւնս մեր այսպէս դատիցի յայլոյ խղճի մտաց, որք անդուռն բերանով ասեն զմէնջ ասել յարելաբար ի ձայնակցութեանց Աննեա գոլ և Մարկոնի և Բարդեծանի և Եւտիկեա: Զի նոքա նմանութեամբ իմն ասեն և ստուերական հանգամանօք և կարծեօք երեւել \*\*\* յաշխարհի զաշխարհափրկիչն \*\*\*\* Քրիստոս, և կամ թէ ըստ Վաղենտիոսի, որ ոչ ի Մարիամնյ, այլ յիւրմէ բնութենէն շրջեալ և արարեալ ասէ Բանին իւր մարմին չարչարական: Ոչ այդ-

\* օր. յարակացուցից: \*\* օր. փոխեսցին: \*\*\* օր. աթեւեալ: \*\*\*\* օր. յաշխարհափրկիչն:

պէս ստգտանին միտք մեր ի միամտութենէն  
որ ի Քրիստոս, և որ այլազգ ունիցի ոք քան  
զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս՝ ի նմանէն  
ի բաց փախչիմք և օտար վարկանիմք յԱս-  
տուծոյ և ընդհանրական եկեղեցւոյ։ Վասն  
զի որ ըստ Հարցն սրբոց ևս ուղղափառաց  
աւանդեցան մեծագոյն հաստատութեամբ  
խոստովանութիւնք՝ ոչ տան մեզ թոյլ յերկ-  
բայս լինել կամ տարագրել ի ճշմարտութե-  
նէ անտի, կամ ի բղխմանէ անտի հրաբոր-  
բոքն բարկութեան տոչորիլ այսինքն յան-  
կարգ և յամբարիշտ և ի հերետիկոս լեզ-  
ուաց, որք սիրեցին զարութիւն քան զբա-  
րութիւն՝ զանօրէնութիւն քան զիօսս ար-  
դարութեան, և համեցան ընդ խօսս կործան-  
ման և զլեզուս նենգաւորս։ \*

Սրդ՝ որք զբանն Աստուած յեղափոխեալ  
ասացին ի մարմին և յոսկը, ի նեարգս և ջի-  
լըս և ի բովանդակ իսկ ի բնութիւն մարմնոյ,  
նորին իսկ են, որ ընդ ամբարշտութեանցն  
կռապաշտեալ վայրազարկեցան և ընկճեալ  
կործանեցան։ Քանզի ոչ եթէ բանին ընու-  
թիւն շրջեցաւ ի մարմին և յոսկերս, և ոչ  
եթէ ինքն յինքեան բնակեաց ի մերումն  
բնութեան, զի ի նմա բնակէ ամե նայն լրու-

մըն Աստուածութեան մարմնապէս: \* Սա-  
յապէս և որ բանին Հօր և որ ի Մարիա-  
մայ մարմինն էր՝ եթէ ասիցէ ոք ի մի բնու-  
թենէ անգոտին յառաջ եկեալ, ի նզովս ուղ-  
ղափառ եկեղեցւոյ հակամիտ գտանի: և որք  
ասենն, թէ պիտակապէս զնմանութիւն միայն,  
և ոչ զբնութիւն մերոյինս մարմնոյ զգեցեալ  
էր Տեառնն՝ ընդ անհաւատս տուժեսցին: Եւ  
որք ի բանս ապիրատս ախտաժետեն՝ թէ  
աստուածային բնութիւն, որ էր հաւասար  
Հօր, առանձնակի թլիատեցաւ և կամ անկա-  
տար երբէք ի կատարելութենէ եղեւ, և կամ  
թէ ի խացին բւեռեալն ոչ էր մարմին բա-  
նին, այլ նոյն ինքն Արարիչ բնութեանն, որ  
էր իմաստութիւն Հօր՝ այնպիսիքն պարտա-  
պանք եղիցին ընդ մծղնէս դրոշմիլ: Ով ոք  
երբէք ի կղերիկոսաց եկեղեցւոյ այնպէս  
յանդգնեալ ժպրհիցի, կամ կշռադատիցէ \*\*  
զինքն ի խորհուրդ չար հերետիկոսաց, մին-  
չեւ ասել հաւանիցի, թէ ընութիւն մարմնոյ  
նախ քան զանուլն ի Մարիամայ էր, և էր  
մարմին աներեսոյթ և անտես՝ եթէ այդպէս  
է, ապա Նա իսկ էր բանն: և գարձեալ՝ թէ  
մի բնութիւն էր բանին և մարմնոյն և կամ  
թէ շրջեալ փոխեցաւ բանն ի մարմին՝ ինքն

\* Կող. Բ. 9: \*\* օք. Կոապաշտիցէ:

\* Սա-  
արիա-  
բնու-  
լս ուղ-  
և որք  
միայն,  
եցեալ  
հն: Եւ  
` թէ  
ասոր  
անկա-  
կամ  
ն Բա-  
ն, որ  
րտա-  
վկ ոք  
նպէս  
ցէ \*\*  
մին-  
ունոյ  
և էր  
դպէս  
` թէ  
կամ  
ինքն

ապա վասն իւր պատարագի և ոչ վասն աշ-  
խարհի և զինքն միայն փրկէ և ոչ զբոլոր ե-  
ղականս. ի բաց տարեալ տրոհեսցի ի մէնջ  
այսպիսի դրէմիսիս և ապիրատ խորհրդոց  
առարկուածք:

Զի որ զզաւակէն Աբրահամու բուռն  
հարկանէր, \* ուստի պարտ իսկ էր Նմա ա-  
մենայնիւ եղբարց նմանել՝ նոյն ինքն ի կու-  
սէն զմարմինն առեալ և միացուցեալ ընդ  
Բանին, որպէս և իւր իսկ վասն մեր զնա  
պատարագէ, վասն զի Բանն Աստուած և Որդին  
ճշմարիտ, որի ճշմարտէ Հօրէ ծնեալ յառաջ  
քան զամենայն յաւիտեանս և բարձրեալ և ա-  
մենակալ և վերապայծառ լոյս՝ ըստ որում և  
ծնողն, և նոյն ինքն զօրութիւն Հօր և աջ և  
բազուկ և կարողութիւն և ճառագայթ և  
ծնունդ էութեան, և հանգոյն և հանգէտ  
զօրութեամբ՝ գործակցութեամբ ընդ Հօր և  
ընդ Հոգւոյն Սրբոյ, Որդի մշտենչենաւոր ի  
բնութենէ Հօր: Եւ մինն միայն յերիցն ա-  
ռանձնացեալ գիմաց և ի նոյնացեալ բնութե-  
նէ և ի կամաց իսկապէս, և մի անշփոթ  
յերրորդութեանն անձնաւորութեանց՝ իջեալ  
յերկնից, բնակեցաւ ի սուրբ յարգանդի կու-  
սին Մարիամայ Աստուածածնին, և այսպէս

սառւգապէս մարմնազգեստեալ և մարդ ե-  
ղեալ՝ արար իւր ճանապարհ և զալստեան և  
յայտնութեան։ որով մատոյց զինքն առ մեզ  
եղբարց նմանեալ և եղեւ որդի Դաւթի, որ-  
դի Աքրահամու։ Այսպէս ի կուսական յար-  
գանդէ և յախեալ մօրէ ծագեցաւ լոյս  
յաշխարհ, որ յառաջ քան զարուսեակն ըստ  
ինքնաբարբառ Բանին, թէ Ես լոյս յաշխարհ  
եկի։ Ըստ սմին սակի և անհասանելին հա-  
սանի, անձառելին քարոզի, անթարգմանե-  
լին թարգմանի, բարձրեալն ի խոնարհ թափի,  
անսկիզբն սկսանի, անմարմինն մարմնանայ,  
Բանն թանձրանայ, երկնաւորն երկրաւոր լի-  
նի, հոգեղէնն հողեղէն, աներևոյթն երե-  
ւոյթ, հինաւուրցն տղա։ Այսպէս իսկ Աստ-  
ուածն յաւիտենական, միակն և անմատոյցն,  
ինքնագոյնն և ինքնիշխանն յերորդութենէն  
ծնունդն Զօր՝ խոնարհեցոյց զերկինս և էջ \*  
և մարդացեալ մարդկապէս և զկերպարանս  
ծառայի զգեցեալ ընդ մարդկան շրջեցաւ,  
անբաժ ի հայրական ծոցոյ։ Եւ ըստ օ-  
րինացն կատարեալ զսոյն իսկ զսա դա-  
ւանէ եկեղեցի հեթանոսաց, ոչ աստուածու-  
թեանն միայն, քան զոր ոչինչ է կատարելա-  
գոյն, այլ և վասն մարդկութեանն օծելոյ

որդ ե-  
եան և  
ու մեզ  
ի, որ-  
յար-  
լոյս  
ըստ  
շխարհ  
Հա-  
մանե-  
Խափի,  
անայ,

որ լի-  
երե-  
Աստ-  
ոյցն,  
Ինչն  
էջ \*

որանս  
եցաւ,  
ոտ օ-  
դա-  
սծու-  
րելա-  
ծելոյ

աստուածութեամբն և եղելոյ որ ինչ էօծն,  
և համարձակիմ ասել՝ զոյգ Աստուած ասէ  
զսա աստուածաբանութիւնն Դրիգորի: Քան  
զի Աստուած ճշմարիտ անմարմին ի մարմնի  
երեւալ լինի՝ կատարեալ ճշմարտութեամբ և  
աստուածային կատարելութեամբ\* ոչ երկու  
գէմն և երկու բնութիւնս, քանզի ոչ գոյ\*  
հնար քառս երկրպագեալ ասել՝ զԱստուած  
և զՈրդի Աստուծոյ և զմարդ և զՀոգի  
սուրբ: Սակա որոյ և նզովէ ոմն ի սրբոց  
զայնպէս ամբարշտեալսն, որք մարդ յաստ-  
ուածային փառաբանութեանն գնեն: Դարձեալ  
ինքնին իսկ Տէրն փառաց զհամազօր և զհա-  
մապատիւ շնորհս մարմնոյն միաւորութեան  
ինքնաբուն իմն ընդ ինքեան ասէ՝ իջեալ  
յերկնից ըստ անքակ միաւորութեան, թէ Ես  
եմ Հացն իջեալ յերկնից: \*\* Եւ այսպէս ա-  
սի երկրորդ անգամ և մարդ երկնաւոր ե-  
րեւեալ յաշխարհի: զի անմահ և անապական  
էութիւն Բանին խառնեալ ընդ ապականա-  
ցու և մահկանացու գոյութեանս և վեհա-  
գոյնն ընդ վատթարագունիս զուգամասնեալ  
զերկուսն ի մի գոյացոյց, յեղափոխեալ ի  
ծայրագոյնն բարի, և անապական կազմեալ  
աստուածացոյց: իսկ ապա յետ միաւորու-

\* օր. քանզի գոյ: \*\* Եռլի. Զ. 44.

թեանն, որպէս ի բաց բարձելոյ յերկուս հատ-  
մանն՝ մի գոլ պարտիմք հաւատալ զՈրդւոյ  
Օծութիւն, որպէս միոյ, սակայն մարմնա-  
ցելոյ և մարդացելոյ։ Այսպէս բացեալ մեր  
զուշ մուաց մերոց ի տեսութիւն աստուա-  
ծային խորհրդոյս՝ զերկուցանեմք \* արտա-  
յայտելով մարմնականացս զմարմնաւորու-  
թիւն անհիւթական բանի՝ ի նոյն ինըն զան-  
շըփոթ և զանբաժան միաւորութիւն զու-  
գականութիւն երկաքանչիւրոցն անփոփխե-  
լի բնութեանց ի մի բնութիւն շարագրեալ,  
զուգընթաց երկնաւոր գոյականութեան. վա-  
սըն զի բոլորն Աստուածն բան զբոլորս մարդ-  
առեալ հոգով բանականաւ և մտօք և բո-  
վանդակ ամենայն կարեօք, բայց ի մեղաց,  
զի զբոլորն մեզ շնորհեսցէ փրկութիւն։ Եւ  
այսպէս երկաքանչիւրոցն բնութեանց և կեր-  
պարանաց ի մի յատկական անձնաւորութիւն  
ընթացեալ կատարին՝ ի մի դէմ և ի մի բը-  
նութիւն, մի Որդի, մի Քրիստոս, մի Տէր՝  
միով երկրպագութեամք պատուեալ։ Զի  
ըստ որում և անբաժանելի Որդի երկրպա-  
գութեամք ի համապատիւ Երրորդութենէն,  
սայապէս և անբաժանելի է յինքեան մարմ-  
նոյն համապատիւ \*\* երկրպագութենէ։ Այս-

\* օր. զեկուցանեմք. \*\*\* օր. Երրորդութենէն համապա-  
տիւ պակաս:

պէս մեք ըստ Սիւնհոգոս ժողովոյն, որ անուանի զուգաճանապարհ, խոստովանիմք զնրդին Աստուծոյ՝ զծնեալն ի չօրէ միածին և զնոյն միածին ի սրբոյ կուսէն Մարիամայ, և ի մի ածեմք և ոչ զերկուս որգիս անուանեմք, այլ մի և զնոյն նոյնացեալ միով ըընութեամբ և անբաժանելի Աստուածութեամբն, և միով պատուով երկրպագեալ: Խսկ առ որում թագուցեալ է ճշմարտութիւնն առաջին և զօրացեալ այժմու մոլորութիւնս, որ զգրեալս ծածկեն և զինքնիմաց տարասութիւնսն ասել հրամացեն, որ ոչ ունին զարժանն՝ ի դէպ առ նոսա բերի Առաքելոյ բանն, թէ Զարմանամք, թէ այնպէս վաղվաղակի փոխիք յայնմանէ, որ կոչեաց ըզձեզ ի շնորհան Քրիստոսի, յայլ աւետարան, որ ոչ թերես գոյ այլ՝ \*\* բայց եթէ իցեն ոմանք, որ խոռվեցուցանել հնարին զմանկունս մօր Սիսոնի և կամ յեղափոխել զաւետարանն Քրիստոսի: Ասկոյն և յայսմ ոչ աղքատացի որ մեծատունն է: Եւ արդ, Հարցեալ զմեր \* ժողովարանս Քաղկեդոնի, որ ըստ տօմարին Լեռնի \*\*\* դաւանս կրեն, թէ զօրպիսի՞ոք ստորոգեն բան զբանէն կենաց՝ այսպէս յայտնապէս ասեն զինքնի-

Գաղ. Ա. 6: \*\* Օք. պակաս զմեր : \*\*\* օք. Եւ Լեռնի:

մայ \* որոճումն բանից ձերում • զի չէ ստորոգեալն, թէ մի դէմ է, բանին մարմնացելոյ, և մի անձն և երկուս բնութիւնս բաժանաբարս և անհաղորդս միմեանց ի միում դիմի: Եւ ահաւասիկ տեսանեմք ըստ բարեպաշտութեան քրիստոսեան հաւատոյն՝ ամենայն իւիք, ամենայն ուրեք, ոչ երբէք երեւեալ բաժինք անմահ բնութեան բանին և նորին և մարմնոյն: Եւ նախ յարտաքնոցն քերթողածաղիկ փիլիսոփայից այս տեսցի, որք յաղագս բաժանման և ապացուցի սոցացն տեսութեանց համառօտ ընձեռնութիւն \*\* առնելով փորձեցան և զգէմ ի բնութեան գոլ ասացին ենթակայացեալ ըստ մեծի պիտեցելոյ խուզման և ըստ բոլոր յեղանակի, և ամենայն իրօք իրազգած լինին բնութեան զգէմ պարունակեալ և ոչ թէ դիմի զբնութիւն:

Իսկ եթէ այսպէս է, որպէս և է իսկ, անհնար է ապա ի միում դիմի երկուց բընութեանց գոյանալ և հարկ է երկաքանչիւրոցն բնութեանց երկուս դէմն միանգամայն շարադասել: Եւ այնուհետեւ, նեստորաբար իմանի նոցա զնել դիմակս ընդդէմ երից որբոց ժողովոցն ողջախոչ և միատարր խոստովանու-

\* օր. զինքն ի մոտաց: \*\* օր. ընձեռուկթիւն:

թեան։ Եւ յետոյ թերեւս ի զղջումն եկեալ  
կամին ընդ Նեստորի զոյ ուղղագոյնսն չարտ-  
փառապէս յանձն առնուլ և տեղի տալ  
քաջ ախորժելով և չորրորդութիւնն յերբոր-  
դութիւնն փառաքանութիւն մուծանել։ Դար-  
ձեալ թէև զերկու ընութիւնսն բռնազրօսա-  
բար ի միում դիմի ախորժեն յարակայել՝ ո-  
չինչ այնպէս թերեւս կարիցեն ցուցանեն կա-  
տարելութիւն ի նմա։ Զի թէ ի կուսէն ծը-  
նեալն այլ ոմն, և այլ յերկաքանչիւրսն բա-  
ժանաբար իմանի, և ոչ նոյն ինքն Աստուած  
կատարեալ և մարդ կատարեալ՝ միով բը-  
նութեամբ, ապա ի միում դիմի միւսն մի-  
ումն \* տէր հանդիպի գոլ և միւս ծառայ։  
Եւ որպէս այս ըստ նոցա իմանի՝ ասասցուք։  
Գրեալ է, եթէ հանէր Յիսուս զգիշերն ի  
գլուխ յազօթսն Աստուածոյ։ Արդ, արդեօք ի  
միում դիմի բնութիւնն մարդկային զբնութիւն  
բանին աղաջէր, զի մի մատնեսցի խաչին։ Թէ  
այդպէս է պարտէ զի մի բնութիւնն տէր միւ-  
սոյն և մինն ծառայ յարմարեսցի։ Եւ այսպէս  
խորհուրդն յերեղիթս ածէ, թէ ի միում դի-  
մի մարդկայինն բնութիւն զաստուածայինն  
աղաջէր, այսինքն թէ զինքն՝ և այսպէս յո-  
ւէտ իմն ի բացեայ ի ճշմարտութենէն բերի

\* օք. եւ միումն։

և միայն ի հրապուրանս զպարզամիտսն արկանէ։ Դարձեալ, զիարդ ի միում գիմի երկու բնութիւն ասի ապտակիլ և խաչիլ։ Եթէ այդպէս է, զմի դէմ որո՞ւմ յերկաքանչիւրոց կամին խոստովանել՝ աստուածութեանըն եթէ մարդկութեանն։ Եթէ աստուածութեանն դաւանեն, զմարդկայինն կորուսանեն զդէմ, և եթէ մարդկութեանն, ապտայսպէս օտարութիւն իմն արկանեն ընդ Աստուածն Բան և ընդ իւր մարդկութիւնն, որպէս ի մարդարէ կամ յայլ ոմն արդար՝ երբեմն ընակեալ և երբեմն գնացեալ։ Ապա ըստ սմին սակի և ընդ մեզ ևս է մինչ ի կատարած աշխարհի։ Եւ այսպէս գարձեալ յորոշել զիմաց Երրորդութեանն՝ տարորոշ ընդ նոցա ցուցանի Բանն Հօր։ Եւ դարձեալ, նորին իսկ ոչ զԱստուած պարտին ասել խաչել վասն աշխարհի, այլ մարդ սոսկ, և միայն յարելութեամք առ Բանն մերձեցեալ, և զփրկութիւն մարդկան մարդով եղեալ և ոչ Աստուծով՝ որպէս Նեստորի և Թէոդորիտայ և Պատլեայ Սամոստացւոյ հաճոյ թուի։ Ապա Ժամ է նոցա աստանօր զաստուածաբանութիւնն Ազիազեանն Գրիգորի ունայնաբանութիւն իմն և յոշինչ պէտս վարկանելո զի ի մեղադրութիւն մատուցեալ նոցա ասէ։ Հիմ մերժէք ի լինելոյ Աստուած ճշմարիտ զայն,

որ ի կուսէն ծնեալ ճշմարտապէս Աստուած  
և չարչարեալ Եւ այլուր, թէ Որ ոչ խօս-  
տովանի զիսչեալն գոլ Աստուած, նզովեալ  
կարգեսցի ընդ աստուածասպաննն: Եւ  
դարձեալ թէ Զի՞նչ քան զայս հրաշափա-  
ռագոյն զԱստուած խաչեալ տեսանել և  
զնոյն ընդ աւազակսն, և մերձ անցողացն  
ծաղր լեալ անըմբնելոյ և քան զկրել ինչ  
ախաս բարձրագունին: Եւ այլուր, թէ Արիւն  
Աստուծոյ և չարչարանս և մահ լսելով մի  
ի վայր անկցիս անաստուածաբար իբրև Աս-  
տուծոյ ջատագով:

Եւ արդ, ի բաց այսուհետեւ ի մէնջ  
տարամերժեալ զտարահամելի սասանող ըն-  
կըդմելութիւնս բանից: Այսպէս ինձ իմա  
զուղղափառ հաւատոյն դաւանս, սակս միոյ  
Հօր Բանին, որ փոխանակ ամենեցուն մեռա-  
ւըն: \* վասն զի ի մարմնին իւրում: զոր առ  
ի կուսէն, անքակ միացաւ, և միանալն յայտ-  
նապէս ցուցանէ զբնութեանցն անքակութիւն  
և զմիութիւն: Այսպէս իմա զբանն մարմին  
եղեալ և բնակեալ ի մեղ: ոչ եթէ շրջել ինչ  
կամ յեղափոխեալ ի մարմին, այլ մարմին վա-  
սըն մեր միացուցեալ իւր՝ Բան Աստուած եղեւ  
մարդ ճշմարտապէս և ոչ կարծիս ունելով:

ոչ որդեգրութիւն իրրեւ զմեզ, այլ ընութեամք միացուցեալ իւր զմարմինն՝ եղեւ մի Տէր, մի Աստուած, Յիսուս Քրիստոս։ Ոչ ի կատարումն ինչ բանն մարմին եղեւ, զի կատարեալ Երրորդութիւնն ոչ ընդունի զյառելուած և ոչ թերութիւն, որ միշտ ի կատարելութեան իւրում է, այլ մարդկութեան բնութեանս եղեւ յաւելուածս հաղորդութեան և գաւանութեան բանին։ Եւ այսպէս նովին մարմնովն վերացեալ անց ընդ գրունս երկնից և ելեալ նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս։ Իսկ որք ոչ այսպէս ընդ մեզ հաւասարեալ դաւանեն զՔրիստոս ըստ մարմնոյ, որ է ի վերայ ամենեցուն՝ Աստուած օրհնեալ յաւիտեանս, այլ երկու ասեն բնութիւնս՝ հարկ է նոցա զմինն երկրպագելի ասել և զմինն ոչ, և ապա յտառուածայինսն \*\*, որ երկրպագելին է, մկրտիլ, իսկ ի մարդկայինսն ոչ մկրտիլ։ Իսկ եթէ ի մահ անդր Նորա մկրտեցաք \*\*\* ըստ գրեցելումն, ապաքէն մի պարտ է խոստովանել ընութիւն զանախտակիր աստուածութեան և զախտակիր մարմնոյն, որով մեռաւն վասն մեր Քանզի ի մահ նորա մկրտութիւն ի մարմնոյ յարութիւն և ի թողութիւն մեզաց լինի

\* օր. աստուածայինն։ \*\* Հռոմ. Զ. 5:

տուեալ։ Մահ ասացին նմա գիրք, այլ ոչ  
խախտումն և ապականութիւն, զի մարմին  
ապականացու ի ձեռն զօրութեան բանին ե-  
ղեւ անապական, և յաղթահարեցաւ մահ ի  
բնութենէ մարմնին մահկանացուի։ Այսպէս  
մեք զԱստուած ասեմք խաչեալ ի Հրէից և  
ոչ զմարդ միայն և ոչ զԱստուած միայն՝ այլ  
զմարդ և զԱստուած։ Դարձեալ չիք հնար  
մահ ասել Աստուածն բանի, բայց եթէ ի մարմ-  
նի ըմբռնեսցի, և չիք հնար անմահ լինել  
մարդոյս բնութեան, բայց եթէ Աստուած  
մարդասցի։ Եւ այնուհետեւ պարտ է ամե-  
նայն իրօք, զի վասն անմահին մահկանա-  
ցուս անմահասցի և վասն մահկանացուիս  
Աստուած իւր զմոհն համարենցի։ Այսպէս  
յերկուց\* բնութեանց մի բնութիւն բանին  
մարմնացելոյ խոստովանի ամենայն աստուա-  
ծասէր հոգի։ ըստ որում և միտք մարդոյ  
ոչ բաժանի յիւրմէ մարմնոյն, այլ մի դէմ,  
մի բնութիւն բովանդակ մարդն։ Փանզի յեր-  
կուց միացեալ որպէս մի ճառեմք զԱստուած  
բանն մարմնով իւրով չարչարեալ վասն մեր։  
Համայն ոչ եթէ զբեկուսն ընդ մարմնոյն ի  
զօրութիւն բանին մտանել ասեմք, որ և ոչ  
ի հոգի մարդոյն։ Զի թէ հոգի մարդոյ ոչ

ըմբռնից ապա որչափ և առաւել զօրութիւն բանին, Եւ թէպետ և հատանի ոտն մարդոյ, զհոգին ոչ կարէ կաղացուցանել՝ և թէ զաջո ոք խլէ, զոգին ոչ կարէ կուրացուցանել այլ հոգւոյն աջօք յոլովագոյնս տեսանէ։ Եւ գարձեալ հոգւոյն ընդ մարմնոյն մեռանել ամենայն աստուածաշունչ գիրք ոչ առնուն յանձն ըստ տէրունեան բանին, թէ Մի երկնչիք յայնմանէ, որ սպանանեն զմարմին և զոգի ոչ կարեն սպանանել։\* վասն զի յորոշել հոգւոյն մեռանի մարդոյ սակայն հոգին որ ի նմա ոչ ի կորուստ ինչ, այլ ի դադարս իւր մեռանի կենդանի։

Այսպէս Հօր անապական Որդին ոչ մեռանի ընդ մարմնին իւրոյ այլ ի ձեռն անապական մահուն իւրոյ զառ ի մեզ մահն խափանէ, և զոմանս արդեամբք յարութեան և զոմանս աւետեօք կենդանիս առնէ, և զապականեալ ստեղծուածն նորոգէ և հանէ ի փառս մարմնոյ իւրոյ։ Դարձեալ ինքն Տէր բարձրութիւն զիսացն անոււանէ և ի նմանութիւն ինքեան բերէ զառ ի Մոլսէսէ եղեալըն<sup>\*\*</sup> օճն սպնձի. զի անդ խորհուրդ գուշակման և աստ յայտնութիւն ճշմարտութեան ի ներքս մտեալ անէ (°)։ զի որք ըստ մարմ-

նոյ՝ և զմարմնաւորութիւն բանին միայն տեսանէ ի խաջին, ըստ օրինակի սակի որ յանապատի անդ, նորին իսկ յերկբայյութենէ թերահաւատութեանն մեռեալ լինին հոգւով, իսկ որ ոչ զմարմինն և եթ միայն զգալի աչօք տեսանեն, այլ ընդ նմին մարմնոյն և զաներեւոյթ աստուածութիւնն իմանալի աչօք իմանան՝ սեռուալ ի խաջին, ոչ մեռանին նոքա երկմտութեամբ զմահն մշտնջենաւոր, այլ հաւասարեալ ընդ մեզ ասասցեն, թէ խաչեալն է Աստուած և ընդ խաչելոյն յառնեն՝ որպէս և նա ետ \* երից աւուրց: Զի եթէ մինն փոխանակ ամենեցուն մեռաւ՝ ապա և ամենեքեան մեռեալ էին, և ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն, ոչ միայն անձանց և եթ իցեն կենդանիք, այլ այնմ որ ի վերայ նոցա մեռաւ և յարեաւ:

Արդ այսպէս անչաքարելի անմարմին բանն Աստուած ի մարմնի գոլով՝ ոչ է մարմին նոյն ինքն բանն, այլ մարմին է բանին ընդ ինքեան միացուցեալ և սակս այսորիկ իւր իսկ հաշուեալ համարի զիւրոյ մարմնոյն չաքարանս, և ինքն աներեւոյթ և անչաքար է: Ուակայն և անշօշափն և անըմբըռո-

նելի զօրութիւն Բանին, ըստ իւրումն հաշուելոյ զկիրսն՝ ասէր մարդարէիւն։ Զթիկունս իմ ետու ի հարուածս և զծնօտս իմ ոչ դարձուցից յամօթոյ ընդ երեսս թքանելոյ։ \* Այսպէս նոյն ինքն \*\* Բանն բանին աստուածեղինի զմեզ ընդունիչո արարեալ ինքն ի չարչարելումն անչարչարական իմասնին և միացեալ ի չարչարականին մարմնին ջնջէ և ապականէ զտկարութիւն ապականութեան մարմնոյն և զգեցուցանէ զանապականութիւն և զզօրութիւն, և այնուհետեւ ոչ կարողանայ մահկանացուս զանմահն ի մահ գրաւել, այլ անմահին զմահ ի բաց ջնջեալ զմահկանացուս ընդ անմահին միտրանէ միով ընութեամբ, և անմահ յարդարէ, և մարմնովն իւրով զայսպիսի անմահութիւն մեզ շնորհէ ըստ առաքելաւանդ բանին, թէ Պարտ է ապականացուիս այս զգենուլ զանապականութիւն և մահկանացուիս այսմիկ զանմահութիւն։ \*\*\* Իսկ թերես ասիցէ ոք, թէ ոչ է զօրութիւն և բան չօր ի խաչելութեան, ասեմք, թէ այս էր, ոչ զբեռու չարչարանացն կրեալ \*\*\*\* կամ զիսոցումն գեղարդեանն, այլ կենդանի միշտ գոլով՝ կը-

\* Նսայի ժ. 6: \*\* օր. Նոյն միակ:

\*\*\* Ա. Կողնջ. ԺԵ. 55: \*\*\*\* օր. կրեաց:

հաս-  
ջթի-  
ո իմ  
զանե-  
անին  
ոեալ  
իմա-  
ռմնի՝  
ակա-  
անա-  
ուհե-  
մահե-  
բաց  
միա-  
ողա-  
ոչու-  
րա-  
զգե-  
ուիս  
որ ի  
ուե-  
ումն  
կը-

րեաց մարմնով դշարչարանսն, և անարգանք  
խաչին համարեցաւ Տետոն փառաց: Ոչ թէ  
դիանն խաչեցին, այլ զբանն անարգեցին և  
զմարմին բանին ի խաչին թևեռեցին, զի  
Աստուած էր, որ անարգեցաւն, և հոգւոյ  
և մարմնոյ Աստուածոյ եղեւ չարչարանքն և  
մաշ և յարութիւն: Թքին ընդերեսս և ծե-  
ծեցին եղեգամբ զգլուխն. ազդ ցաւոցն \*  
մարմնոյն, և անարգանքն զօրութեան բանին  
համարեալ եղեն: Ոչ նուազեցաւ լոյսն և ոչ  
զիջաւ Արդարութեան Արեգակն, այլ դա-  
դարեալ միայն ի շարժելոյ զմարմինն եռօր-  
եայ թաղմամբն. Խշխանութիւն ունիմ ասէ,  
զնել զանձն իմ և իշխանութուն ունիմ առ-  
նուլ զնա: \*\* Ամենայնիւ յամենայնի բաւա-  
կան էր, ի դժոխս էջ, այլ զմեռեալսն ար-  
տաքս եհան ի բանտէն, և ի տանէ կապա-  
նաց ի դրախտն չոգաւ, այլ զաւազակին զա-  
ւետին հաստատեաց. քաղցեաւ, այլ զհինգ  
հազարս յերիս գարեղէն նկանակէ կերակը-  
րեաց. ծարաւեցաւ, այլ զջուրն կենդանի Ատ-  
մարացւոյ կնոջն արբուցանէր. վաստակեցաւ,  
այլ պարաբառնայր զտաժանմանն լուծու-  
թիւն գարշապարաց մերոց, որ ի թիւնարե-  
րան թշնամոյն. չարչարեցաւ, այլ խրատ խա-

զաղութեան մերոյ ի նմա և նորա վիրօքն  
բժշկեցաք ամենեքեան։ խաչեցաւ, այլ որ կայ-  
րըն մեզ հակասակ՝ երարձ զայն ի միջոյ և  
բեռեռեաց ընդ խաչափայտն։ եղեւ վասն մեր  
անէծք, այլ զմեր անէծքն յանձն իւր ընկա-  
լաւ և ընդ մեր անիծիցն պարտուց ինքն  
չարչարեցաւ։ մեռաւ, այլ ի ձեռն մահու  
Տեռոն մահ մեռաւ և կեանք թագաւորեցին։  
յարեաւ և ընդ ինքեան յարոյց զմեռեալս  
յԱղամայ և կենագործեաց ի կեանս անմա-  
հըս Սակայն այսպէս գոլով ի մարմնի՝ ոչ  
կորոյս զանմարմնականն, այլ կաց մնաց որ  
ինչ էրն, և եղեւ որ ինչ ոչն էր։ Եւ թէպէտ  
կարող էր ազատել զմարմինն իւր յամենայն  
կարօտութեանց, սակայն լծեաց զնա ընդ լր-  
ծով կարօտութեան և թոյլ ետ մարմնոյն  
զիւրոն կրել։ Եւ այս յայտնի աճմանէն և ի  
զարգանալոյն է Նորա, ի տրտմելոյ ոգոյն  
մինչ ի մահ, յասելոյն թէ Մարմինս տկար  
է, ի ցուցանելոյ զերկիւդ մարդկեդէն բնու-  
թեանն, ի քրտանէն որ իջանէրն, յըմբոնե-  
լոյն ի վիրացն, յապտակացն, ի չարչարանա-  
ցըն, ի մահուանէն և այլ ինչ խոնարհագու-  
նից, որ մարմնոյն բնութեան են նշանակիչք,  
զի յայտնապէս ցուցցի մարմին և հոգի և  
միտք և ամենայն ինչ, որ է ի մարդ ճշմար-  
տապէս և ոչ կարծեօք։ Այսպէս մեռաւ նա

ի թօքն  
ր կայ-  
ջոյ և  
ն մեր  
ընկա-  
ինքն  
մահու-  
եցին.  
ւեալս  
սնմա-  
ի՝ ոչ  
ոց որ  
պէտ  
ենայն  
դ լր-  
մնոյն  
և ի  
ոգոյն  
ոկար  
ոնու-  
ունե-  
անա-  
ոգու-  
իչք,  
ի և  
մար-  
նա

ճշմարտիւ, որպէս զմարդ ճշմարիտ, և չըմե-  
ռաւ ճշգրտիւ՝ որպէս Աստուած։ զի ոչ կո-  
րոյս զանմարմնականն և զաստուածականն,  
վասն զի մի զօրութիւն իսկութեան Հօրէ և  
մի իմաստութեան տէրութեանն։ Բան անըմ-  
բըռնելի, լոյս անզննելի, պարզ իբրև զծնօ-  
ղըն, ծածուկ իբրև զշայր, աներեւոյթ յա-  
ներեւութէ, լոյս ի լոյս, Աստուած յԱստու-  
ծոյ, անբաւ, անհաս, անչափ, անանց, ան-  
ժամանակ, անսահման, անեղ, անարատ,  
սկիզբն, անկատարած, անձառ, անքնին,  
անտես, անզննելի, անյօդ, անշարժ, անբո-  
վանդակելի, մեծ քան զամենայն և քան  
զբնաւս, կարող ամենայնից և բաւական ա-  
մենեցուն, և ամենակալ ի վերայ ամենայն  
երեւելեաց և աներեւութից։ Այսպէս հաւա-  
սարութիւն աստուածային Բանին Հօր ոչ ան-  
կեալ առանձնաբար ընդ չարչարանօք, այլ  
զմարմնոյն իւրոյ չարչարանս իւր վարկեալ,  
վասն զի Աստուածոյ մարմին էր, և ինքն յիւ-  
րում ամբողջ կացեալ միացեալ և յորմէ-  
ծնեալն էր ընդ նմին անբաժանելի և ընդ  
նմին յաւիտենական է։ Յերկրի ընդ մարդ-  
կան շրջեցաւ և յիրկինս աթոռ իւրում էր。  
ի վերայ խաչին թեեռեալ և ընդ աջմէ Հօր  
նստէր, ի գերեզմանի եղեալ և ի ծոցոյ Հօր  
ոչ մեկնեցաւ, այլ և ոչ թերեւս ի մահկանա-

ցու մարմնոյն։ Այսպէս իմասցիս ի վերայ Քրիստոսի զաստուածութեանն ընութիւնն զիւր գերազարդ գերունականութիւն՝ անուշահոտ բուրելով աշխարհի։

Խոկ յաղագս սրբաստցն կցորդի, որ ըստ եռակի անուանցն մարմնացելոյ բանին ի վերայ բերեմք զխաչեցարն՝ այսպէս ոմանց իմանի, թէ սուրբ Երրորդութեանն զխաչն սահմանեալ կամ կազմեալ ախորժեմք։ Թէ այդպէս է, յիշաւի խորշին և մերժին ի մէնջ իմաստունքն յունաց, որք առեալ կատարեալ իմաստութիւն՝ անհանճարք եղեն, սակայն ըստ համոյական և իւրեանցն մտացածին բարուց ոչ կարեն զմեզ մերձ կացուցանել առ հերձուածըն, զոր ոչ է ծանուցեալ մեր։ Վասն զի յեկեղեցիս սրբոց ոչ Երրորդութիւնն թերեւս զայս փառաբանութիւն վերածանեալ մատուցանեմք, այլ Որդւոյ միայնոյ զի որպէս ըգմարդանալն ի կուսէն Որդւոյ միայնոյ հաւատամք, սայապէս և զխաչն և զմահ Որդւոյ խոստովանիմք։ Այսպէս և համարձակախօսն Եսայիս յամոռ բարձրութեան և վերացելոյ զՈրդի տեսանէ նստեալ և Նմա սրովքէագոչ ձայնն զերեքսրբեանն աղազակեալ սրբաստցութիւնս ըստ Որդւոյն Որոտման Յովհաննու աւետարանութեանն։ Թէ Վասն այսորիկ ոչ կարէին հաւատալ ի Յիսուս, զի

կուր  
նոց  
զիա  
այսոր  
բաս  
խոր  
տես  
զի  
ընծա  
ի իս  
եկեղ  
բագէ  
Որդւ  
ուրա  
ծնօդ  
ուած  
թեա  
վերս  
նեսա  
անմն  
հին  
զոր  
ուան  
բարս  
նայն

կուրացոյց զաքս նոցա և ապշեցոյց զմիտս  
նոցա և թէ ջայս ասաց Եսայի, զի ետես  
զփառս Նորա և խօսեցաւ վասն Նորա: \* Եւ  
այսր աղագաւ միանգամայն իսկ երիս սըր-  
բասացութեամբ զՈրդի փառաբանեմք խաչին  
Խորհրդով ըստ որում և Խգնատիոս Հե-  
տեսօդն առաքելոց տեսանէ զօրս երկնաւորս,  
զի ի վերայ Որդւոյ նոյն սրբասացութիւն  
Ընծայեցուցանէին, այսինքն Տեսառն փառաց  
ի խաչ ելելոյն: Եւ ըստ սմին սակի ամենայն  
Եկեղեցիք քրիստոսի ի ժամ սրբոյ պատա-  
րագին զերիս սրբասացութիւնսն ի վերայ  
Որդւոյն կանոնեալ \*\* երգեն ցնծութեամբ և  
ուրախութեամբ: Եւ սուրբ Հայրն մեր և  
ծնօդն ըստ աւետարանին Գրիգորիոս աստ-  
ուածահրաշ պատգամացն վարդապետու-  
թեամբ զսոյն երիս անուանակոչութիւնս ի  
վերայ միոյ Քրիստոսիս սահմանէ: Տեսա-  
նես, ասելով, զի աստուած և Հզօր և  
անմահ և Հայր Հանդերձելոյ աշխար-  
հին՝ զայս օրածին մանուկս անուանէ,  
զոր և ուղղափառ գաւանողք զերիս ան-  
ուանսս զայսոսիկ, մի մի ի վերայ յա-  
րաբարդելով միոյ մարմնացելոյ Բանին՝ ամե-  
նայն շունչ բարերանէ յասել անդ սուրբ

\* Յով. ԺՅ. 39—41: \*\* օր. կանոնեալ են:

Աստուած զՈրդի, և սուրբ հզօր զՈրդի, և  
սուրբ անմահ զՈրդի, որ խաչեցար վասն  
մեր, զի ողորմեսցի մեզ մարդասիրաբար.  
զանմահն Աստուածն Բանի և զիաչեցարն  
ըստ մարդկութեանն միում անձին եղելոյն:  
Խոկ զինի բանն, թէ Վի է ամենայն երկիր  
փառօք նորա՝ ըստ ուզգափառ գաւանու-  
թեան եկեղեցւոյ այսպէս իմանի, թէ Երրոր-  
դութեանն փառաւորութիւն յերկրի ի ձեռն  
մարդանալոյն Տեառն ծաղկաւէտեալ ճոխա-  
նայ, ըստ որում և Ցէր. Խոկ առ Հայր ա-  
սէր. Ես զքեզ փառաւորեցի յերկրի, և յայտ-  
նեցի զանուն քո մարդկան: <sup>\*</sup> Եւ դարձեալ  
Հայր զՈրդի, թէ Փառաւոր արարի և դար-  
ձեալ փառաւոր արարից: <sup>\*\*</sup> Այսպէս փառա-  
ւորութիւն մարդանալոյն Տեառն ի փառա-  
ւորութեան Երրորդութեանն միաւորեալ ցու-  
ցանի. զի միութիւն երրեակ և երրեակ ի մի-  
ութիւն կատարի: Այսպէս մեք յետ երրեկի  
սուրբն ասելոյ՝ անմահ խաչեցար ասեմք.  
անմահ Աստուածն Բանի և խաչեցար մարդ-  
կութեանն՝ միում անձին եղելոյ, և որոշ-  
եալ դիմաց անձնաւորութեան Որդւոյ ի Հօրէ  
և ի Հոգւոյն սրբոյ, և զնոյն խաչիլն նմին  
Խոկ փառս անուանեմք. որպէս ինքնին

\* Յով. Ժէ. 5 և 6: \*\* Յով. ԺԹ. 28:

իսկ աղօթէր, թէ ֆառաւորեա զիս, չայր, փառօքն, զոր ունէի յառաջ քան զլինելն աշ-խարհի առ իբէն: \* Ոչապաքէն տւասիկ խաչն է փառք: Եհաս առէ, ժամ զի փառաւո-րեսցի Որդի մարդոյ: Եւ դարձեալ, եթէ ֆո-քըր մի խոնարհ քան զհրեշտակս \*\* տեսա-նեմք զՅիսուս վասն չարչարանաց խաչին՝ փառօք և պատուով պսակեալ: Որդ այսպէս մեք միայնոյ Միածնի Որդւոյն՝ մարմնացելոյ Որդւոյն զխաչեցարն դաւանեալ երգեմք, որ անհասանելին է գիտութեամք և արարչու-թեամք ընդ չօր և ընդ Սուրբ Հոգւոյն, որ ընդ աջմէ չօր նստի միացելով մարմնով իւ-րով, և դատաւոր է և ժառանդ և միայն իսկզբանէ առ Աստուած՝ Բանն Աստուած և լոյս ճշմարիտ: Իսկ որք ոչն ախորժեն զմար-մինն Քրիստոսի ի փառս Երրորդութեան բարձրացուցանել և ոչ զԱստուած ասեն խաչեալ, այլ մարդ սոսկ, և զատանեն զՅի-սուս ի Քրիստոսէն, և երկու անձինս յայտ-նեն՝ զոմն չարչարելի և զոմն անչարչարելի, և ոչ ասեն զՄիածնին Որդին Աստուծոյ մի-ացելով մարմնով իւրով խաչեալ և չարչար-եալ և մեռեալ և յարեալ և նստեալ ընդ աջմէ չօր՝ ոչ է նա այն, որ անուանեալն

\* Յովէ. ԺԵ. 5 \*\* ԵՊԸ. Բ. 7:

կոչիւ այսինքն քրիստոնեայ, և ըստ Պօղոսի՝  
կրիցէ դատաստանս, ո ոք և իցէ: Խոկ մեք  
յաւէտ յարմարական և յիրաւի և վայելուզ  
գոլ ասեմք զսրբասացութիւնսն միոյ յանձ-  
նաւորութեանն յէրպարգութենէն մարմնացե-  
լոյ Բանին, որ է մի Տէր Յիսուս Քրիստոս,  
որով ամենայն, որ փառաց և զօրութեան  
դՔրիստոսդ անուն յինքն պարունակէ: Որ  
ոչ սոսկ մարդ, այլ Տէր փառաց, որ վասն  
մեր խաչեցաւ, որ ոչ թերեւս այլ ինչ փառա-  
րանութիւն ի ներքս բերի, որով փառարանի  
խաչեան և այլ որով փառարանի Բանն յէր-  
րորդութեանն, որում կրկնի ամենայն ծունը  
երկնաւորաց և երկրաւորաց և սանդարա-  
մետականաց: \*

Այսպէս ես զայս սակաւուք ինչ ձեզ  
հարկեցայ գրել զի մի լոռութեամբ տրտմե-  
ցուցից զձեղ, աղաջեմ՝ զի աստուածասիրա-  
բար բարեկամութեամբ և իմաստակիր մտա-  
ւորութեամբ ընկալջիք զո՞ռ ի յինէն տու-  
ցեալոդ, և եթէ գիր բանից տգիտաբար  
ինչ լսելեաց ձերոց ծեքիցի, \*\* զհասարակաց  
մարմնոյո ընութեան տկարութիւն և զտգի-  
տութիւն ծանուցեալ շնորհեցէք մեզ:  
Եւ թէովէտ և իմն ըստերիւրին իմացմունք,

\* Փիլիպ. Բ. 40: \*\* օր. ծեքիսցի:

այլ հաւատամ՝ ոչ միտել, կամ թիւրել սրտից  
ձերոց, որ էք իսկ հաստատուն սիւնք եկե-  
ղեցւոյ, այլ ախորժաբար և բարւոքապէս  
խրատեալ և յանդիման կացուցանել զասու-  
մըն ասողիս, և սրտիւ հաւատալ յարդարու-  
թիւն և բերանով խոստովանիլ ի փրկութիւն,  
զի հաւատով փառաւորեսցի ամենեցունցն  
Աստուած, և ոչ քննութեամբ ինչ ի վերայ ըլ-  
նութեան աստուածութեանն հասանել խրոխ-  
տիցիմք: Այսուհետեւ կրծիմն բարձցի և  
ցանկն քակեսցի և միջնորմն յատակեսցի, և  
իւրաքանչիւր ոք ի մէնջ հաստատեսցի ի մի  
նոր մարդ, յոր կոչեցաք ծննդեամբ սուրբ  
աւագանին, և ալօթանուէր բանն տէրու-  
նեան ի մեզ յարագրեալն էր գործեսցի: \*

Թէ Որպէս Եօն Հայր, ի քեզ և Դու յիս,  
կամիմ և սոքա ի մեզ իցեն: \*\* Այսպէս  
եղիցուք կատարեալք ի մի ամենայն հաւա-  
տացեալք մարմնացելոյ Բանին կենաց: և փա-  
ռըս տացուք չօր և Որդւոյ և Հոգւոյն: \*\*\*

\* Հոռմ. Ժ. 10: \*\* Շէտք է լինէր երեւի. «Ներգոր-  
ծեսցի : \*\*\* Յովէ. Ժ. 21: \*\*\*\* օք. Մրոյ, այժմ եւ մէշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն: – Զայս թուղթս սուրբն  
Ներսէս Համբրոնացի եպիսկոպոս տարեալ եղեւ ի Կոս-  
տանդնուազօհս ճրամանաւ Գրիգորի կաթուղիկոսի եւ Լեռոնի  
բարեպաշտի արքային:

U

1

2

3

4

5

6

7

8

9

10

11

1. *Любима града Ати, чиста сръбска за християните  
града, на която съществува и името Ати във всички  
трапези и гробници, и чиста българска града.  
Съществува и чиста българска града, на която  
съществува и името Ати, във всички  
трапези и гробници, и чиста българска града.  
Съществува и чиста българска града, на която  
съществува и името Ати, във всички  
трапези и гробници, и чиста българска града.  
Съществува и чиста българска града, на която  
съществува и името Ати, във всички  
трапези и гробници, и чиста българска града.  
Съществува и чиста българска града, на която  
съществува и името Ати, във всички  
трапези и гробници, и чиста българска града.  
Съществува и чиста българска града, на която  
съществува и името Ати, във всички  
трапези и гробници, и чиста българска града.*

2. *Любима града Ати, чиста сръбска за християните  
града, на която съществува и името Ати във всички  
трапези и гробници, и чиста българска града.  
Съществува и чиста българска града, на която  
съществува и името Ати, във всички  
трапези и гробници, и чиста българска града.  
Съществува и чиста българска града, на която  
съществува и името Ати, във всички  
трапези и гробници, и чиста българска града.  
Съществува и чиста българска града, на която  
съществува и името Ати, във всички  
трапези и гробници, и чиста българска града.*

3. *Любима града Ати, чиста сръбска за християните  
града, на която съществува и името Ати във всички  
трапези и гробници, и чиста българска града.*

Մայր Աթոռի Տպարանում՝ վաճառում՝ են հետեւմալ գրքերը.

Ո. Կ.

1.	Բագրեանգ և Զրաբաշխ գտւառ,					
	աշխ.	Ա. Հայկունի			1	40
2.	Դեօլինգերի Նամակները, թարգ.					
	Խաչվանքեան	.	.	.	—	50
3.	Էլիզէ Ռէլիի, Ռուսական Հայաստան,					
	թարգ.	Միաբան			—	30
4.	Նոյնը, Լազիստան — Հայաստան և					
	Քիւրդիստան թարգ.	Միաբան			—	50
5.	Խանգարմունք Հայկաբանութեան,					
	աշխ.	Գ. Խալիս.	Ա. Խավագեան		—	20
6.	Կիրակուայ Հանգստութիւնը և նորա					
	նշանակութիւնը առողջութեան					
	համար, Դօկ.	Նէլարի թարգ.	բժ.			
	Մ. Զարգարեան	.	.	.	—	20
7.	Մարգարիտ Արքայութեան, Երկնից գրեց					
	Խրիմեան Հայրիկ	.	.	.	—	30
8.	Խաչի Ճառ, գրեց Խրիմեան Հայրիկ				—	30
9.	Դատաստանագիրք Հայոց, Մխիթար					
	Գօշի	.	.	.	3	—
10.	Մանկական Պարտէզ, թարգ. բժ.					
	Լ. Տիգրանեան	.	.	.	—	20
11.	Պապիկ և Թոռնիկ, գրեց Խրիմեան					
	Հայրիկ.	.	.	.	—	60

12.	Պատմութիւն Ժողովոց Հայաստան- եայց Եկեղեցւոյ, աշխա. Ա. եպիս. Միսիթարեան	.	.	— 20
13.	Պատմութիւն Սամուէլ քհ. Անեցւոյ, Հրատ. Ա. Տէր Միքելեան	.	1	20
14.	Զամբռու. Աիմէ օն կաթուղիկոսի.	1	—	
15.	Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմի- ածնի Ա. Հինգ գաւառացն Արարա- տայ Ա. Հատ. աշխ. Յ. եպիս. Շահ- իսիթունեան	.	.	2 —
16.	Նոյնը Բ. Հատոր.	.	2	—
17.	Տօմար և Տօնացոյց, աշխ. Գ. քհ. Աղանեան	.	.	— 50
18.	Պարզ Քարոզներ, Ա. գիրք աշխ. Էմ. քհ. Նաղարեան	.	.	— 15
19.	Նոյնը Բ. գիրք	.	.	— 15
20.	Ուսումնաօիրութիւն Խորենացու, աշխ. Գ. Տ. Մկրտչեան	.	.	— 35
21.	Յաճախապատում, Հրատ. Ա. Տ. Մի- քելեան	.	.	1 —
22.	Գեղարքունի աշխ. Մ. արքեպիսկ.՝ Ամբատեան	.	.	2 —
23.	Համամ Արևելցի Հրատ. Կ. կոս- տանեան	.	.	— 20
24.	Ցոլչաննէո Խմաստանէր Հրատ. Կարապետ Վարդապետ	.	.	— 15

— 20

— 20

— —

2 —

2 —

— 50

— 15

— 15

— 35

1 —

2 —

— 20

— 15



